«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3101 Գյումրի, Ֆուրմանովի 32
հեռ. + (374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ shirakcentre@gmail.com,
shirakcentre@rambler.ru
Կայք՝ www.shirakcentre.org

ՀՀ Քաղաքաշինության նախարար
Սամվել Թադևոսյանին

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն նախարար

ՀՀ նախագահի հանձնարարականով և ՀՀ կառավարության որոշմամբ Գյումրիում երկրաշարժի հետևանքով անօթևան և բնակարանային փոխհատուցման ենթակա ևս 420 ընտանիքների համար բնակարաններ պետք է կառուցվեն և շահագործվեն ընթացիկ՝ 2013 թվականին:

Խնդրում ենք, հանրությանն իրազեկելու նպատակով, մեզ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք բնակարանային շինարարության ծրագիրը ներկայումս ընթանում է և արդյո՞ք այդ բնակարանները կշահագործվեն ընթացիկ տարում: Եթե այո, ապա խնդրում ենք տաք տեղեկատվություն շինարարական հրապարակի կառուցման վայրի վերաբերյալ:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի

2013 թ. մայիսի 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010. ք.Երևան. Հանրապետության հր.
Կառավարության փող 3
Ֆաքս (3742) 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

11.06.13 N 04/13.1/3658-13

Ձեր N ---------- առ ----------

ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի,
Ֆուրմանովի 32
<Շիրակ կենտրոն> ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Ձեր 2013 թվականի մայիսի 15-ի գրությամբ բարձրացված՝ Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում լրացուցիչ կառուցվելիք բազմաբնակարան շենքերի շինարարության ընթացքին և ժամկետներին վերաբերող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով նախարարությունը դիմել է <Գլենդել Հիլզ> ՓԲ ընկերություն:

Կից Ձեզ է ուղարկվում <Գլենդել Հիլզ> ՓԲ ընկերության պատասխան գրության պատճենը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով

Ռ.Ալավերդյան

Ե.Աթայան
52-46-80

«ԳԼԵՆԴԵԼ ՀԻԼԶ» ՓԲԸ
ՀՀ, Ք. Երևան, Սայաթ-Նովա 19
գործ. հասցե Ք. Երևան 0065, Սեբաստիա 37
Հեռ.՝ (+374 10) 711 499, 733 099

«GLENDALE HILLS» CJSC
Sayat-Nova 19, Yerevan, RA
Business address: Sebastia 37,Yerevan 0065
Tel.: (+374 10) 711 499, 733 099

449-03.06.13

ՀՀ Քաղաքաշինության նախարարի
տեղակալ պարոն Ա.Կարապետյանին

Հարգելի պարոն Կարապետյան

Ի պատասխան Ձեր 23.05.2013թ. թիվ 05/13.1/3262-13 գրության հայտնում ենք, որ ըստ ընկերության ժամանակացույցի Գյումրի քաղաքում լրացուցիչ կառուցվող շենքերի շինարարության ավարտը նախատեսվում է 2014 թվականի սեպտեմբերին: Հայտնում ենք նաև, որ շինարարական հրապարակը գտնվում է Մուշ 2-2 թաղամասի հարևանությամբ՝ հարավ-արևմտյան հատվածում: Շինարարությունը գտնվում է հիմնային աշխատանքների փուլում:

Հարգանքով՝

Տնօրեն Վ. Հովհաննիսյան

«ԳԼԵՆԴԵԼ ՀԻԼԶ»
«GLENDALE HILLS»
01549866

<< ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մտից № 6/5401-13
«04» 06 2013թ.